ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
ՂԵԿԱՎԱՐ

ք. Երևան «29» հոկտեմբերի 2022 թ.

ՀՐԱՄԱՆ N 427-Հ

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ՀԱՅՏԱՏՈՒ՝ ՍՈՒՐԵՆ ՏԻԳՐԱՆԻ ԹՈՓԱԼՅԱՆԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԸ ԱՆՓՈՓՈԽ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով Կադաստրի կոմիտեի 2022 թվականի հոկտեմբերի 19-ին կայացած ՀՀ տարածքում գնահատման գործունեության մասնագիտական որակավորման քննության (այսուհետ՝ Որակավորում) ընթացքում առաջադրված խնդիրներում առկա սխալների հիմքով հայտատու Սուրեն Տիգրանի Թոփալյանի կողմից 2022 թվականի նոյեմբերի 1-ին ներկայացված դիմում-բողոքը և բողոքի հիման վրա Կադաստրի կոմիտեի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 16-ի N 3-Լ կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խմբի 2022 թվականի նոյեմբերի 22-ի N 1 արձանագրությամբ տրված եզրկացությունը՝

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1044-Ն որոշման հավելվածով հաստատված «Գնահատման որակավորման քննությունների անցկացման կարգ»-ի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի պահանջների համաձայն՝ Որակավորման քննության արդյունքները հայտատուները կարող են գրավոր բողոքարկել հանձնաժողովին՝ առաջադրանքի որևէ հարցադրման կամ դրա պատասխանի ճշտության մասով, որակավորման ավարտից հետո մեկ ժամվա ընթացքում: Բողոքի հիման վրա հանձնաժողովն արձանագրային որոշմամբ մերժում է բողոքը կամ բավարարում՝ սույն կարգի 36-րդ կետում նշված միավորները (առնվազն 120) հավաքելու դեպքում հայտատուին համարելով որակավորման քննությունը հաղթահարած:

Միաժամանակ Կարգի 46-րդ և 47-րդ կետի պահանջների համաձայն՝ գրավոր բողոքը քննության է առնում այն կոմիտեում մուտքագրվելուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում՝ կոմիտեի ղեկավարի համապատասխան կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խմբի կողմից (այսուհետ՝

աշխատանքային խումբ), որի կազմում կարող են ընդգրկվել նաև գնահատողի գործող որակավորման վկայական ունեցող անձինք: Հայտատուի չներկայանալն աշխատանքային խմբի նիստին չի խոչընդոտում աշխատանքային խմբին՝ եզրակացություն տալուն:

Բողոքարկման արդյունքում կոմիտեի ղեկավարը, աշխատանքային խմբի եզրակացության հիման վրա, ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

1) հայտատուի որակավորման վերաբերյալ հանձնաժողովի հրապարակած արդյունքն անփոփոխ թողնելու մասին.

2) հայտատուի որակավորման վերաբերյալ հանձնաժողովի հրապարակած արդյունքը փոփոխելու վերաբերյալ.

3) բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթի ժամկետը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով սահմանված ժամկետներով երկարաձգելու մասին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի համաձայն՝ վարչական վարույթ հարուցելու հիմքերից է՝ անձի դիմումը, բողոքը:

Օրենքի 19-րդ հոդվածի և 46-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեությունն է:Վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ:

Ըստ 2022 թվականի նոյեմբերի 22-ի N 1 արձանագրության հայտատու Սուրեն Տիգրանի Թոփալյանը 2022 թվականի հոկտեմբերի 19-ի որակավորման քննության ավարտից հետո բողոքարկել է իր կողմից լրացված հարցաշարի պատասխանները և Հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքում հայտատուի կողմից հավաքված միավորներին ավելացվել է ևս 2 միավոր (արդյունքում՝ 113 միավորը դարձել է 115): Աշխատանքային խմբի ուսումնասիրությամբ հայտատուին առաջադրված հարցաշարի 59-րդ հարցի համար ևս ավելացվեց 2 միավոր, իսկ 65-րդ հարցի համար՝ 1 միավոր: Հարցաշարի 75-րդ, 76-րդ հարցերի և 35-րդ խնդրի մասով պարզվեց, որ հայտատուի կողմից չի նշվել որևէ պատասխան, որը Կարգի 30-րդ կետի պահանջների համաձայն՝ գնահատվում է զրո միավոր:

Աշխատանքային խմբի ուսումնասիրության արդյունքում հայտատուի հավաքած 115 միավորին ավելացվեց ևս 3 միավոր և եզրակացությամբ հայտատուի որակավորման վերաբերյալ հանձնաժողովի հրապարակած արդյունքը՝ 115 միավորը փոփոխվեց դառնալով 118, որը սակայն բավարար չէ գնահատողի որակավորման վկայական տրամադրելու համար, քանի որ Կարգի 36-րդ կետի համաձայն՝ հայտատուն

համարվում է որակավորումն անցած որակավորման քննության առաջադրանքից առնվազն 120 միավոր ստանալու դեպքում:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի N 1044-Ն որոշման հավելվածով հաստատված «Գնահատման որակավորման քննությունների անցկացման կարգ»-ի 47-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի ղեկավարի 2022 թվականի նոյեմբերի 16-ի N 3-Լ կարգադրությամբ ստեղծված աշխատանքային խմբի 2022 թվականի նոյեմբերի 22-ի N 1 արձանագրությամբ տրված եզրկացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. ՀՀ տարածքում գնահատման գործունեության մասնագիտական որակավորման քննության 2022 թվականի հոկտեմբերի 19-ի հայտատու՝ Սուրեն Տիգրանի Թովմայանի որակավորման ստուգման արդյունքները թողնել անփոփոխ:
2. Սույն հրամանը կարող է բողոքարկվել դատական կարգով:

29.11.2022

X

ՍՈՒՐԵՆ ԹՈՎՄԱՍՅԱՆ

Սուրեն Թովմասյան Signed by: TOVMASYAN SUREN 1201860393